

Ընտանեկան բռնության դեմ պայքարը Հայաստանում (տեղեկագիր)

Ընտանեկան բռնությունը քրեական հանցագործություն է: Այն բնորոշվում է որպես վարքագիծ, որի նպատակն է իշխանություն և վերահսկողություն հաստատել ընտանիքի անդամի կամ գուգրնկերոջ նկատմամբ՝ անկախ հարաբերությունների ֆորմալ կամ ոչ ֆորմալ լինելուց:¹

Ընտանեկան բռնությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

- ֆիզիկական բռնություն
- սեռական բռնություն
- հոգեբանական բռնություն
- տնտեսական բռնություն

Ընտանեկան բռնության տեսակները

Ֆիզիկական	Սեռական	Հոգեբանական	Տնտեսական
			
<ul style="list-style-type: none"> • Բռնի ուժի կիրառում, • դիտավորությամբ առողջության վնասում, • ֆիզիկական ուժեղ ցավ պատճառել, • ազատությունից սպառնալիս գրկել և այլն: 	<ul style="list-style-type: none"> • Սեռական անձեռնմխելիության ոտնահարում • սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություն և այլն: 	<ul style="list-style-type: none"> • Դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառում, • վախի հարուցում, • արժանապատվության նվաստացում, • սոցիալական ծայրահեղ մեկուսացում և այլն: 	<ul style="list-style-type: none"> • Հարկադրված նյութական կախվածության ստեղծում, • գոյության անհրաժեշտ միջոցներից զրկում, • կրթության կամ աշխատանքային իրավունքներից զրկում և այլն:

¹ «Ընտանեկան բռնություն» եզրը Հայաստանում ակտիվորեն սկսեց շրջանառվել 2010թ. սկսած՝ Չարուհի Պետրոսյանի՝ մեծ աղմուկ հանած սպանության գործից հետո, երբ ամուսինը կնոջը


տևական ժամանակ ֆիզիկական բռնության ենթարկելուց հետո հոկտեմբերի 1-ին սպանել էր վերջինիս:² Դեպքից հետո հոկտեմբերի 1-ը հիշատակվում է որպես ընտանեկան բռնության ազգային օր՝ ուղեկցվելով մոմավառությամբ:

Ընտանեկան բռնությունը որպես գենդերային հիմնախնդիր

Ընտանեկան բռնությունից անհամաչափորեն տուժում են կանայք: Վերջին տարիներին նկատելի է ընտանեկան բռնության և, մասնավորապես, կանանց նկատմամբ ընտանեկան բռնության աճ:

ՀՀ Ոստիկանության տվյալների համաձայն, 2015-2017թթ. գրանցվել է ընտանեկան բռնության 2333 դեպք, որից 1422-ը (61%) ամուսնու կողմից կնոջ նկատմամբ գործադրված բռնությունն է:³

2015-2017 թթ. գրանցվել է ընտանեկան բռնության **2333** դեպք



■ Ամուսնու կողմից կնոջ նկատմամբ (61%)
 ■ Կնոջ կողմից ամուսնու նկատմամբ (2 %)
 ■ Յնողի կողմից երեխայի նկատմամբ (8 %)
 ■ Չավակի կողմից ծնողի նկատմամբ (14%)
 ■ Ընտանիքի այլ անդամների կողմից (14 %)

Միացյալ ազգերի կազմակերպության կողմից իրականացված հետազոտությունների համաձայն՝ աշխարհում ամեն երրորդ կին ենթարկվում է բռնության առնվազն մեկ տեսակի: Բռնության ենթարկված կանանց մոտ 40%-ը հայտնում է, որ երեխաներն ականատես են լինում բռնությանը:⁴

Հայաստանում ընտանեկան բռնությունը ամենաքողարկված հանցագործություններից է: Կարելի է եզրակացնել, որ ընտանեկան բռնության իրական պատկերն էլ ավելի մտահոգիչ է: Օրինակ՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ կռալիցիայի» կողմից տրամադրվող ընտանեկան բռնության վիճակագրությունը Հայաստանում հետևյալն է՝ 2000 դեպք տարեկան: 2010-2017 թվականների ընթացքում հայտնի է կնասպանության 50 դեպք:⁵

ՀՀ-ում կանանց իրավահավասարությունը կարգավորող միջազգային և տեղական իրավական ակտեր

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների սկզբունքը համարվում է սոցիալական արդարության հասնելու, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման և երկրի կայուն զարգացման երաշխիք:

Հայաստանում գենդերային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Մահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Այսպես, Հայաստանը վավերացրել է կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պայմանագրեր.

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW), 1993թ.,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, (*CEDAW Optional Protocol*) 2006թ.,
- Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա, 2007թ.,
- Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրություն, 2002թ.:

Միջազգային այս փաստաթղթերը կարևոր են այն առումով, որ կոչ են անում կառավարությանը՝ միջոցներ ձեռնարկել կանանց և աղջիկների նկատմամբ խտրականությունը վերացնելու ուղղությամբ և բարձրացնում են վերջիններիս իրազեկվածության մակարդակը գենդերային հավասարության մասին:

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, 2013:

Միջազգային պայմանագրերի վավերացման նկատմամբ պարտավորություններից ելնելով՝ Հայաստանը պարտավորվել է ունենալ ընտանեկան բռնության մասին օրենք՝ որպես սեռի հիմքով բռնության և ընտանեկան բռնության վերացման միջոց:

- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, 2017:

CEDAW: Հոդված 2.
Մասնակից պետությունները պարտավորվում են.

(բ) ընդունել կանանց նկատմամբ ամեն տեսակի խտրականությունն արգելող համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ, ներառյալ պատժամիջոցներ, որտեղ դրանք անհրաժեշտ են,

(գ) ձեռնարկել բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական, միջոցները՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ,

CEDAW Optional Protocol:

Հոդված 1. Սույն Արձանագրության Մասնակից պետությունը ընդունում է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդագրություններն ընդունելու և քննարկելու իրավասությունը:

* Եթե ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են գենդերային հարաբերությունները կարգավորող այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հանրային քաղաքականության ինստիտուտի դիրքորոշումը ընտանեկան բռնության կանխարգելման իրավական կարգավորումների վերաբերյալ

Հանրային քաղաքականության ինստիտուտը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունումը կարևոր քայլ է համարում ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության ուղղությամբ՝ մատնանշելով հետևյալ ձեռքբերումները.

- Օրենքի հիմքում ընկած են ընտանիքում բռնության ենթարկված անձի շահերը (Հոդված 2, կետ 1.1),
- Օրենքը սահմանում է ընտանիքում բռնություն հասկացությունը, վերջինիս տեսակները և ընտանիքի անդամներին (Հոդված 3),
- Օրենքը դասակարգում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները (1.նախագուշացում, 2.անհետաձգելի միջամտության որոշում, 3.պաշտպանական որոշում) (Հոդված 5),
- Օրենքը կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելումն ու ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրագործող լիազոր մարմինների և հատուկ կառույցների գործառույթները (Գլուխ 3, Հոդված 13-18),
- Օրենքը երաշխավորում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց հոգեբանական, նյութական, սոցիալական աջակցության տրամադրումը (Հոդված 13, մաս 2):

Մինևույն ժամանակ, մտահոգիչ ենք համարում Օրենքում առկա հետևյալ բացերն ու ոչ հստակ կարգավորումները.

- Օրենքը կիրառում է «բռնությունը ընտանիքում» եզրը, որը փոխարինելու է եկել «ընտանեկան բռնություն» եզրին: Վերջինս հանրորեն կիրառելի և միջազգային պայմանագրերի կողմից ավելի ընդունելի տարբերակ է:
- Օրենքը որպես ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության երաշխիք նշում է ընտանիքում ավանդական արժեքների ամրապնդման սկզբունքը (Հոդված 2, մաս 2): Մինչդեռ «ավանդական արժեք» եզրի որևէ իրավական մեկնում առկա չէ Օրենքում, ինչը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Տերմինը նաև խնդրահարույց է՝ հաշվի առնելով ՀՀ-ում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների և ոչ ավանդական ընտանիքների վերաբերյալ խտրական վերաբերմունքը:
- Օրենքը որպես բռնություն է սահմանում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կողմից, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքով որպես հանցագործության սահմանում ունեն միայն ֆիզիկական և սեռական բռնության տեսակները:
- Ընտանիքում բռնության փաստով քրեական գործ հարուցվելուց հետո բոլոր իրավական կարգավորումները ստանձնում է ՀՀ քրեական օրենսգիրքը, որը չեզոք գործիք է և զգայուն չէ ընտանեկան բռնության յուրահատկությունների նկատմամբ:

Այսպես օրինակ՝ Քրեական օրենսգիրքը ուսումնառության է առնում փաստացի արձանագրված հանցագործությունը և առկա ապացույցները, մինչդեռ չի դիտարկում նախկինում ընտանիքում առկա, բայց չարձանագրված բռնության ակտերը (այդ թվում՝ հոգեբանական ու տնտեսական բռնությունը) կամ չի նախատեսում պաշտպանության միջոցներ այն պարագայում, երբ ընտանիքում բռնություն ենթարկված անձը բնակվում է բռնություն գործադրած անձի հարազատների հետ, ինչը կարող է հանգեցնել կրկնակի բռնության: Մյուս կողմից ընտանիքում բռնության ենթարկված անձի պարտականությունն է ապացուցել իր՝ ընտանեկան բռնության գոհ լինելը:

- Օրենքը լուծման մեխանիզմներ առաջ չի քաշում նախկինում ընտանեկան բռնության դատական պրակտիկայի թերացումների բարելավման շուրջ: Փորձը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության գործեր քննելիս դատարանների կողմից հաշվի չեն առնվում հանցագործության նախապատմությունը, ամբաստանյալի գործած հանցանքի շարժառիթը, հասարակության համար վտանգավորության աստիճանը:
- Օրենքը պաշտպանության տակ է առնում անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսիններին (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց), նախկին ամուսիններին (Հոդված 4, մաս 1(ա)), սակայն չի դիտարկում գույքընկերների միջև նախաամուսնական հարաբերություններում բռնության առկայությունը: Մյուս կողմից՝ այլ անմիջական հարազատների պարագայում (տատ, պսակ, քույր և եղբայր, ամուսնու ծնողներ և այլն) դիտարկվում է միայն համատեղ բնակության փաստը (Հոդված 4, մաս 1(բ)):
- Օրենքը չի սահմանում որպես երեխայի նկատմամբ հոգեբանական բռնություն, երբ նա ականատես է լինում ընտանիքում բռնության ակտի: Համապատասխանաբար կարգավորումներ չկան, որոնց համաձայն երեխան կմնա բռնություն չգործադրած ընտանիքի անդամի հետ:
- Օրենքը սահմանում է ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներն իրականացնող մարմինների լիազորությունները (Գլուխ 3), որտեղ Հոդված 16-ը սահմանում է ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում կրթության ոլորտի լիազոր մարմնի լիազորությունները, այնուամենայնիվ անտեսվում են ոչ ավանդական կրթության և ոչ ֆորմալ կրթության, այդ թվում հեռուստատեսության, համացանցի և մեդիայի դերը, որպես կարծրատիպահեն և բռնություն վերարտադրող հարթակ:

Հանրային քաղաքականության ինստիտուտը կարծում է, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը անհրաժեշտ, բայց բավարար չէ ընտանեկան բռնության նվազեցման համար: Մենք գտնում ենք, որ վերը նշված բացերը պետք է լրամշակվեն, և որպես բարեփոխումների հիմնական երաշխիք, պետության կողմից ակնկալում ենք հետևյալ քայլերը.

- ՀՀ քրեական օրենսգրքում տարանջատել ընտանեկան բռնության բաղադրիչը, և մշակել ու կիրառել ընտանեկան բռնության գործերի քննման առանձնահատուկ գործիքակազմ և պատիժ:

- Ընտանեկան բռնության բաղադրիչը ներառել ՀՀ քրեական օրենսգրքում՝ որպես ծանրացուցիչ հանգամանք (Հոդված 63-ում):
- «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի Ստամբուլյան կոնվենցիան, որը ՀՀ-ն ստորագրել է 2018 թվականի հունվարին, վավերացնել հնարավորինս սեղմ ժամկետներում, որով իրավական հիմք կստեղծվի Օրենքում առկա նշված բացերը լրացնելու և նոր գործիքակազմ կիրառելու համար:

Հարցերի և պարզաբանումների համար կարող եք դիմել ՀՔԻ կրթաթոշակատու Լուսինե Քոսակյանին՝ գրելով lusine.kosakyan@gmail.com կամ lusine.kosakyan@ipp.am էլ. հասցեներին:

© Հանրային քաղաքականության ինստիտուտ

¹ “Domestic Violence”, *Legal Dictionary*, www.legal-dictionary.thefreedictionary.com/Domestic+Violence

² Բռնությունը ավանդույթ չէ, ամուր ընտանիքի հիմքը սերն ու հարգանքն է, *hetq.am*, www.old.hetq.am/arm/news/29760/brnutyuny-avanduyt-che-amur-yntaniqi-himqy-sern-u-harganqn-e-lusankarner.html

³ *Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա*, www.coalitionagainstviolence.org/hy/%D5%A3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80/

⁴ Facts and figures: Ending violence against women: Various forms of violence, *UN Women*, www.unwomen.org/en/what-we-do/ending-violence-against-women/facts-and-figures

⁵ Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագիծ. Կողմ եւ Դեմ կարծիքներ, www.womennet.am/dv-11/